Գ. Գ. ԴԱՎԹՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՍՄԿԿ Կենտկոմի՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին» թեզիսներում նշված է, որ «հենվելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքի վրա, Լենինը մշակեց սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման տեսական ու գործնական կարևորագույն պրոբլեմները»[1]։ Լենինի մշակած այդ պրոբլեմներից մեկը, որը բացառիկ կարևոր նշանակություն ունի սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման համար, հանդիսանում է համաժողովրդական հաշվառման և վերահսկողության կազմակերպման պրոբլեմը։

Վերահսկողությունը ամեն մի պետականության անքակտելի մասն է։ Վերահսկողությունը, ինչպես և պետությունը, դասակարգային է։ Բայց, ի տարբերություն պետության, վերահսկողությունը սոցիալական կատեգորիա է։ Դա մարդկային համակեցության կարևոր ֆունկցիան է, քանի որ ոչ մի հասարակարգ չի կարող զարգանալ առանց իրեն հատուկ վերահսկողության ձևերի։ Այդ վերահսկողության բովանդակությունն ու ձևերը որոշվում են տրվյալ հասարակության դասակարգային կառուցվածքի բնույթով։

«Իսկապես ասած, վերահսկողության ամբողջ հարցը,— գրել է Վ. Ի. Լենինը,— հանգում է այն բանին, թե ով ում է վերահսկում, այսինքն՝ ո՞ր դասակարգն է հանդիսանում վերահսկողը և ո՞րը վերահսկվողը»[2]։

Կապիտալիստական հասարակարգում, որտեղ թագավորում է ունևոր դասակարգերի ամենազոր իշխանությունը, վերահսկողությունն իրականացվում է հօգուտ մագնատների և բոլոր միջոցներով պատսպարում կապիտալիստական շահույթների գաղտնիքները։ Այնտեղ կառավարման սիստեմն ընդհանրապես և վերահսկողությունը մասնավորապես, հարմարեցված են այնպես, որպեսզի հաստատվի խիստ և կուռ հաշվառում ու վերահսկողություն բանվորի, աշխատավորի եկամուտների ու ծախսերի վրա, նրա ստացած աշխատավարձի ու աշխատանքի արտադրողականության վրա։

Վ. Ի. Լենինը գրել է, որ բանվորի եկամուտների ու ծախսերի հաշվառումն ու վերահսկողությունը կապիտալիստական հասարակարգում դիտվում է որպես բաց գիրք. «...որտեղ ամեն մի բուրժուա իրավունք ունի շարունակ նայելու, միշտ մերկացնելու բանվորի այսինչ «շռայլությունը», նրա այսինչ իրը թե ծուլությունը և այլն»[3]։

Ինչ վերաբերում է ունևոր դասակարգերի եկամուտների վերահսկողությանը, ապա դա բուրժուական պետության պայմաններում, որը պաշտպանում է տիրող դասակարգերի արտոնությունները, անիրագործելի է։ Մարքսի

---

1 «Սովետական Հայաստան», № 147, 25 հունիսի, 1967 թ.։

2 Լենին, երկեր, հատ. 25, էջ 437։

3 Նույն տեղում, էջ 455։

և Էնգելսի դիպուկ արտահայտությամբ, բուրժուական պետությունը միայն բուրժուազիայի գործերի կառավարման կոմիտե է։

Բուրժուազիայի շահույթների իսկական վերահսկողությունը, նախ՝ կրացահայտեր բուրժուական կարգի շահագործողական էությունը, կխարխլեր կապիտալիզմի հիմքերը, երկրորդ, բուրժուական պետության պայմաններում վերահսկողությունը կրում է ռեակցիոն-բյուրոկրատական բնույթ, որտեղ բյուրոկրատիան ինքը հազարավոր թելերով կապված և միահյուսված է բուրժուազիայի հետ, և ըստ այդմ, իր հավատքով ու արդարությամբ պաշտպանում է նրա շահերը, ամեն ինչով պատսպարում կապիտալիստական շահույթների գաղտնիքները։

«...Այդ գաղտնիքի պահպանումը բառացի մի բուռ մարդկանց պահպանումն է ընդդեմ ամբողջ ժողովրդի»[4]։

Վերջապես, երրորդ, վերահսկողությունը կապիտալիստների նկատմամբ բուրժուական պետության մեջ անհնար է, որովհետև կապիտալիստական հարաբերությունների հիմքն է կազմում արտադրության միջոցների «սուրբ և անձեռնմխելի» համարվող մասնավոր սեփականությունը։

Վերահսկողությունը ունևոր դասակարգերի ու նրանց ծառաների, կապիտալիստական ավանդույթների բոլոր կրողների նկատմամբ հնարավոր է միայն սոցիալիստական հեղափոխության հաղթանակից ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումից հետո։ Իսկական, բանվորական ռեալ վերահսկողությունը մարքսիզմ-լենինիզմը միշտ դնում է պրոլետարիատի դիկտատուրայի կողքին ու միշտ նրանից հետո։

Իսկական ռեալ համընդհանուր վերահսկողության, այդ թվում կապիտալիստների նկատմամբ վերահսկողության իրականացման համար, Վ. Ի. Լենինը անհրաժեշտ էր համարում հեղափոխության հաղթանակից հետո իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Բոլոր բանկերի միավորումը մեկ ազգային բանկի մեջ և նրա գործողությունների վրա վերահսկողության սահմանում,

2. Սինդիկատների ազգայնացում,

3. Առևտրական գաղտնիքի վերացում,

4. Արդյունաբերողների, առևտրականների և առհասարակ տնտեսատերերի հարկադրական միավորում միությունների մեջ,

5. Բնակչության միավորում սպառողական ընկերությունների մեջ և վերահսկողություն դրանց նկատմամբ[5]։

Խոսելով ռեալ վերահսկողություն իրականացնելու գործում բանկերի ազգայնացման նշանակության մասին, Վ. Ի. Լենինը նշել է. «Միայն բանկերը ազգայնացնելու դեպքում կարելի է հասնել այն բանին, որ պետությունը կիմանա, թե որտեղ և ինչպես, որտեղից և ինչ ժամանակ են հոսում միլիոններն ու միլիարդները»[6]։

Բանկային գործառնությունների վերահսկողությունը, եթե դրանք միավորված են մեկ պետական բանկում, հնարավորություն է տալիս եկամտահարկ բռնագանձել նաև ունևոր դասակարգերից։ Քանի դեռ բանկերը ազգայնացված չեն ու մասնավոր են, կապիտալիստների համար հնարավորություն է

4 Լենին, Երկեր, հատ. 25, էջ 433։
5 Նույն տեղում, էջ 419։
6 Նույն տեղում, էջ 421։

ընձեռվում պահպանել գործողությունների գաղտնիքները՝ միլիոնավոր ու միլիարդավոր գնշահույթներ քամելու համար։

Բայց հայտնի է, որ կապիտալիստական հասարակարգում բոլոր ձեռնարկությունները, սինդիկատները փոխադարձ սերտ կապի մեջ են, անխզելիորեն միաձուլված, թեպետև հանդիսանում են առանձին մագնատների մոնոպոլիան։ Դրանից հետևում է, որ չի կարելի ազգայնացնել բանկերը, առանց որոշակի քայլ կատարելու դեպի առևտրական ու արդյունաբերական սինդիկատների պետական մոնոպոլիայի ստեղծումը։

Այդ բնագավառում Վ. Ի. Լենինը գտնում էր, որ հասարակ դեկրետներով հնարավոր կլինի ռեակցիոն-բյուրոկրատական կարգավորումը փոխարինել հեղափոխական-դեմոկրատականով, մտցնելով բանվորական միությունների միատեսակ հաշվետվություն, վերահսկողություն, առևտրական գաղտնիքի վերացում։ Առևտրական գաղտնիքի վերացումը,—գրել է Վ. Ի. Լենինը,—իսկական վերահսկողության առաջին խոսքն է։ Հենց այստեղ է կապիտալի ամենազգայուն տեղը և ամեն մի վերահսկողության բանալին։

Որպեսզի հասարակության մեջ և առաջին հերթին ունևոր դասակարգերի վրա իսկական վերահսկողություն հաստատվի, հարկավոր է ոչ միայն ազգայնացնել բանկերն ու սինդիկատները, այլև վերացնել առևտրական գաղտնիքը։ Որպեսզի վերահսկողությունը դառնա համընդհանուր, համընդգրկող, հարկավոր է նաև մեկ միության մեջ միավորել մանր արտադրողներին, առևտրական և այլ մանր-սեփականատերերին, իսկ սպառման բնագավառում՝ բնակչությանը միավորել սպառողական ընկերություններում։

Այս բոլոր հիմնական միջոցառումներն օրգանապես կապված են իրար հետ, բխում են մեկը-մյուսից։ Նրանց իրականացումը, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, հնարավոր է միայն այն պայմաններում, երբ իշխանությունն անցնում է բանվոր դասակարգի ձեռքը, այսինքն՝ երբ հաղթանակում է սոցիալիստական հեղափոխությունը և հաստատվում է պրոլետարիատի դիկտատուրա։

Որպեսզի բանվոր դասակարգը, լիակատար իմաստով դառնա տիրապետող դասակարգ և ձեռնամուխ լինի սոցիալիստական շինարարությանը, պետք է բուրժուազիայից բռնագրավի ոչ միայն բանկերը, այլև երկաթուղիները, գործարանները, ֆաբրիկաները, հանքերը, հանքահորերը և դրանք դարձնի հասարակական սեփականություն։ Դրանում է կայանում տնտեսական կարգի սոցիալիստական վերափոխման գլխավոր բովանդակությունը՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում։

Սովետական իշխանության համար դժվար չէր դեկրետավորել խոշոր կապիտալիստական ձեռնարկությունների, բանկերի, տրանսպորտի և տնտեսության մյուս ճյուղերի ազգայնացումը և դրանով իսկ դնել սոցիալիստական կացութաձևի սկիզբը, նոր հասարակարգի հիմքը։ Ամենադժվար խնդիրը տնտեսության կառավարման կազմակերպումն էր, խոշոր ձեռնարկությունների նկատմամբ հաշվառման ու վերահսկողության կազմակերպման ապահովումը, և, ինչպես Վ. Ի. Լենինն է ասել, ամբողջ պետական մեխանիզմը մի միասնական տնտեսական օրգանիզմի, մի միասնական խոշոր մեքենայի վերափոխումը, մեքենա, որը աշխատի այնպես, որպեսզի հարյուր միլիոնավոր մարդիկ ղեկավարվեն մի պլանով։ Դա վիթխարի խնդիր էր, որի լուծումը ոչ մի կերպ չէր կարող լինել հաղթական երթ, ինչպիսին, օրինակ, եղավ երկրում քաղա-

ական իշխանության հաստատումը։ Խոսքն այստեղ վերաբերում է տասնյակ ու տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքի ամենախոր, տնտեսական հիմունքների կազմակերպմանը։ Եվ այդ խնդրի գլխավոր և հիմնական գծերի լուծումից հետո միայն, ցույց է տալիս Վ. Ի. Լենինը, կարելի կլինի ասել, որ Ռուսաստանը դարձել է ոչ միայն սովետական, այլև սոցիալիստական։ Ահա թե ինչու իշխանության գրավումից հետո, ծանրության կենտրոնը կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության գործունեության մեջ տեղափոխվեց դեպի տնտեսական խնդիրների լուծումը։

Ելնելով այդ առանձնահատկությունից Վ. Ի. Լենինը էկոնոմիկայի կառավարման խնդիրը հանգեցնում է երկու գլխավոր հատվածի.

1. «Հաշվառում և վերահսկողություն արտադրության և մթերքների բաշխման նկատմամբ, այդ հաշվառման և վերահսկողության առավել լայն, համատարած և ունիվերսալ ձևերում և

2. Աշխատանքի արտադրողականության բարձրացում»[7]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը ամբողջ պետական կառավարման անկյունաքարը դարձրեց հաշվառումն ու վերահսկողությունը, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության բարձրացումը, որպես ամենագլխավոր և անհրաժեշտ պայմանը նոր հասարակարգի վերջնական հաղթանակի համար։ Լենինի ըմբռնմամբ, աշխատանքի արտադրողականությունը բավական լայն հասկացողություն է։ Այն նշանակում է և՛ աշխատանքի ժամանակակից կազմակերպում, և՛ գիտակցական կարգապահություն, և՛ բանվորների բարձր կուլտուրական մակարդակ, ինչպես նաև արտադրության մեջ գիտության և տեխնիկայի վերջին նվաճումների ներդրում։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման, նոր հասարակարգի հաղթանակի գլխավոր միջոցը հանդիսանում են իստագույն համատարած հաշվառումն ու վերահսկողությունը։

Հաշվառման և վերահսկողության ճիշտ կազմակերպումը նոր կարգի տնտեսական կառավարման էությունն է, սոցիալիզմի էությունը։ Դա կադրերի պատրաստման դպրոց է, հաղթանակի միջոց շահագործման, բոլոր տեսակի կարիքների ու աղքատության դեմ մղվող պայքարում, ուղի սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակի ճանապարհին։

1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին գրած իր աշխատություններում, և հատկապես «Սովետական իշխանության հերթական խնդիրները»-ում Վ. Ի. Լենինը մշակել և գիտականորեն հիմնավորել է սոցիալիստական շինարարությանն անցնելու պլանը։ Անհրաժեշտ էր երկրի տնտեսության բազմաթիվ կացութաձևերի պայմաններում արտադրությունը կազմակերպել այնպես, որպեսզի նյութական բարիքների բաշխումը կատարվեր ժողովրդի ամենալայն ու ակտիվ մասնակցությամբ, ստեղծվեր և ամրապնդվեր տնտեսության սոցիալիստական կացութաձևը, այն դարձվեր գերիշխողը, իսկ հետո միակն ու համապարփակը։

Այդ խնդրի գործնական լուծումը հնարավոր էր միայն այն դեպքում, երբ կսահմանվեր խստագույն հաշվառում և վերահսկողություն արտադրության ու մթերքների բաշխման, աշխատանքի չափի ու սպառման չափի վրա։

---

7 В. И. Ленин. Полн. собр. соч., т. 36, стр. 130.

Այսպես, սոցիալիստական արտադրությունը կարող է հաջողությամբ զարգանալ պլանային ձևով. դա օրենք է։ Իսկ սոցիալիստական պլանավորումն ամենից առաջ պահանջում է հաշվառում։ Առանց երկրի արտադրողական ուժերի վիճակի ճիշտ իմացության, հնարավոր չէ մտածել ժողովրդական տնտեսության պլանավորման, պրոպորցիոնալ զարգացման մասին։ Ռեսուրսների հաշվարկումը, այսպիսով, դառնում է համապետական մասշտաբով սոցիալիստական պլանավորման առաջին պայմանը։

Որպեսզի պլանավորումը լինի գիտականորեն հիմնավորված, այն պետք է հենվի խստագույն հաշվառման ու վերահսկողության վրա։ Աշխատանքի ու սպառման չափի վրա վերահսկողություն իրականացնելու միջոցով կենսագործվում է նաև բաշխման սոցիալիստական սկզբունքը՝ «Յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների և յուրաքանչյուրին ըստ աշխատանքի»։

Սոցիալիզմը՝ դա հաշվառում է։ Այսպես է սահմանել Վ. Ի. Լենինը սոցիալիստական վերափոխումների ու նոր հասարակարգի կառուցման բովանդակությունը։ Այս միտքը Լենինի մոտ կարմիր թելի նման անցնում է բազմաթիվ աշխատություններում ու ելույթներում։ Էսեռների հետ ունեցած բանավեճի ժամանակ, Լենինն ասում էր. «Թող բանվորները ձեռնամուխ լինեն բանվորական վերահսկողություն ստեղծելուն իրենց ֆաբրիկաներում ու գործարաններում, թող նրանք գյուղին մատակարարեն գործարանային արտադրանքներ, թող այդ ապրանքները փոխանակեն հացի հետ։ Ոչ մի արտադրանք, ոչ մի ֆունտ հաց չպետք է հաշվառումից դուրս մնան, որովհետև սոցիալիզմը — դա ամենից առաջ հաշվառում է»[8]։

Այնուհետև, 1917 թ. նոյեմբերի 4-ին (17) բանվորների ու զինվորների դեպուտատների Պետրոգրադի սովետի նիստում արտասանած ճառում Վ. Ի. Լենինն ասում էր. «Սոցիալիզմը՝ դա հաշվառում է։ Եթե դուք կամենում եք հաշվի առնել երկաթի և գործվածքի ամեն մի կտորը, հենց դա էլ կլինի սոցիալիզմ»[9]։

Համաժողովրդական հաշվառման և վերահսկողության դերը, որը բխում է սոցիալիզմի էությունից, պայմանավորվում է ոչ միայն տնտեսության պլանային կառավարումով, այլև նրանով, որ անհրաժեշտ է վերջնական հաղթանակի հասնել խաբեբաների, սպեկուլյանտների, կաշառակերների դեմ մղվող պայքարում, կարգի հրավիրել ձրիակերներին ու կապիտալիզմի ավանդույթների մյուս կրողներին՝ հատկապես կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում։

Վ. Ի. Լենինը նշել է, որ սոցիալիստական հասարակարգը ամեն տեսակի պարազիտներից վնասազերծելու, ռուսական հողը ամեն տեսակի վնասատու միջատներից՝ լու-խաբեբաներից, վայտոջիլ-հարուստներից մաքրելու համար հարկավոր է կազմակերպել համաժողովրդական, միլիոնավոր ու միլիոնավոր կամավոր բանվորների ու գյուղացիների եռանդուն, հեղափոխական էնտուզիազմով տոգորված հաշվառում ու վերահսկողություն՝ արտադրության ու մթերքների բաշխման վրա։

Ոչ թե կյանքի, այլ մահվան պատերազմ խաբեբաների, սպեկուլյանտների դեմ։ Վ. Ի. Լենինը աշխատավորների այս թշնամիների նկատմամբ ցուցաբե-

8 Լենին, Երկեր, հատ. 26, էջ 346։
9 Նույն տեղում, էջ 354։

րած ամեն մի տատանում. ամեն մի սենտիմենտալություն համարում էր ծանրագույն հանցագործություն սոցիալիզմի առաջ։

Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս հաշվառմանն ու վերահսկողությանը, այն համարելով կարևոր գործոն աշխատանքի և հասարակական սեփականության նկատմամբ նոր վերաբերմունք դաստիարակելու գործում։

Այս տեսակետից Վ. Ի. Լենինը անհրաժեշտ էր համարում հարց դնել աշխատավոր բանվորների ու գյուղացիների մեծամասնության համար աշխատանքային պարհակ մտցնելու մասին։

Աշխատանքային պարհակի հաստատումը աշխատավորների համար նշանակում էր հաստատել աշխատանքային կարգապահություն և ինքնակարգապահություն։ Անհրաժեշտ էր աշխատավորների գիտակցությունից դուրս մղել «ամեն մեկն իր համար, միայն աստվածը բոլորի համար» տխրահռչակ կանոնը։

Հարկավոր էր յուրաքանչյուր բանվորի դաստիարակել ոչ միայն իր գործարանի, այլև ամբողջ երկրի բախտի համար պատասխանատվության բարձր զգացման ոգով, որպեսզի բանվորները հասկանան, որ իրենք են իրենց երկրի տերը և նոր հասարակարգ են կառուցում իրենց համար, որ սոցիալիստական հասարակության հարստությունները ստեղծվում են իրենց աշխատանքով, որ նրանք կոչված են ճանապարհից հեռացնել այն ամենը, ինչ խանգարում է իրենց աշխատանքին, իսկ երկրին՝ հաջողությամբ առաջ ընթանալ դեպի նրշված նպատակը։

Ելույթ ունենալով աշխատանքի կոմիսարների համագումարում, 1918 թ. մայիսին, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ աշխատանքային կարգապահությունը, որի մասին խոսում են ֆաբրիկաների ու գործարանների սահմաններում, պետք է տարածվի ամբողջ երկրում, որպեսզի աշխատավոր լայն զանգվածները հասկանան, որ ուրիշ ելք չկա, որպեսզի «գիտակից բանվորը իրեն զգա ոչ միայն որպես տեր իր գործարանում, այլ որպես երկրի ներկայացուցիչ, որպեսզի նա զգա պատասխանատվություն»[10] երկրի բախտի համար։

Սոցիալիստական շինարարության հաջողությունները Վ. Ի. Լենինը ուղղակի կախման մեջ էր դնում բանվոր դասակարգի, աշխատավոր զանգվածների գիտակցական կարգապահությունից։

Մասսաների լայն ինքնագործունեության լենինյան սկզբունքները երբեք էլ չէին նշանակում արտադրության միտինգային ղեկավարում։ «Միտինգի՛ր, բայց կառավարիր առանց ամենափոքրիկ տատանման»[11]։ Մարքսիզմ-լենինիզմը հանդես է գալիս ընդդեմ ամեն մի անարխիզմի ու անկարգության՝ արտադրության մեջ։ Զնական դեմոկրատիզմը,— սովորեցնում է Վ. Ի. Լենինը,— պետք է ենթարկվի հեղափոխական նպատակահարմարությանը։ Վճռականորեն հանդես գալով, մի կողմից, աշխատավոր մասսաների մեջ անարխիզմի և մանրբուրժուական սանձարձակության ամենաանշան արտահայտության, մյուս կողմից, մերկ վարչարարության ու ղեկավարման գրասենյակային-բյուրոկրատական մեթոդների դեմ, Վ. Ի. Լենինը հիշեցնում էր կուսակցությանն ու բանվոր դասակարգին այն բանի անհրաժեշտությունը, որ «պետք է սովորել աշխատավոր մասսաների բուռն, գարնանային հորդությամբ հոսող, բոլոր

---

10 Լենին, Երկեր, հատ. 27, էջ 500։
11 Լենին, Երկեր, հատ. 33, էջ 62—63։

ափերից դուրս եկող միտինգային դեմոկրատիզմը միացնել երկաթե կարգապահության հետ աշխատանքի ժամանակ, անառարկելի ենթարկման հետ—մի անձի, սովետական ղեկավարի կամքին՝ աշխատանքի ժամանակ»[12]։

Միանձնյա ղեկավարության սկզբունքները արտադրության մեջ չեն բացառում, այլ ենթադրում են այդ սկզբունքների զուգակցումը ժողովրդական մասսաների լայն դեմոկրատիզմի հետ։ Միանձնյա ղեկավարությունը պահանջում է ոչ միայն կատարման ստուգում վերևից, այլ նաև ստուգում ներքևից՝ ղեկավարության նկատմամբ մասսաների պահանջկոտության բարձրացման, նրա թերությունների քննադատման միջոցով և այլն։ Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հաշվառումն ու վերահսկողությունը կազմում են սոցիալիզմի էությունը, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում առանց համաժողովրդական հաշվառման ու վերահսկողության կազմակերպման հնարավոր չէր սահմանել աշխատանքային պարհակ շահագործող դասակարգերի նկատմամբ, հնարավոր չէր խելացիորեն օգտագործել բուրժուական մասնագետներին, հնարավոր չէր հաջող պայքար մղել մանրբուրժուական տարրերի, սպեկուլյացիայի, խաբեբաների դեմ, հնարավոր չէր ստեղծել երկաթե կարգապահություն աշխատանքում և կարգավորել արտադրությունը՝ համապետական մասշտաբով։

«Միջոցը մեկն է՝ կազմակերպվեցե՛ք մինչև վերջին մարդը, կազմակերպեցե՛ք արտադրության հաշվառումը, կազմակերպեցե՛ք սպառման հաշվառումն ու վերահսկողությունը և արե՛ք այնպես, որպեսզի մենք անտեղի չշպրտենք հարյուր միլիոններով տպված դրամը, և ոչ մի հարյուրանոց, որն անկանոն կերպով ընկել է մեկի ձեռքը, պետական գանձարկղ վերադառնալով խույս չտա։ Այդ անկարելի է անել ո՛չ հեղափոխության բռնկումներով, ո՛չ էլ բուրժուազիային վերջ տալով։ Այդ կարելի է անել միայն ինքնակարգապահությամբ, միայն բանվորի ու գյուղացու աշխատանքի կազմակերպումով, միայն հաշվառմամբ ու վերահսկողությամբ»[13]։

Հաշվառման և վերահսկողության կազմակերպումը Վ. Ի. Լենինը համարում էր բանվորների, զինվորների ու գյուղացիների յուրաքանչյուր սովետի, մատակարարման յուրաքանչյուր միության կամ կոմիտեի, սպառողական յուրաքանչյուր ընկերության, ֆաբրիկա-գործարանային յուրաքանչյուր կոմիտեի կամ, ընդհանրապես, բանվորական վերահսկողության գլխավոր տնտեսական խնդիրը։

Դիմելով բանվորներին և գյուղացիական մասսաներին, Վ. Ի. Լենինը կոչ էր անում «Ինքներդ ձեռնամուխ եղեք արտադրության և արդյունքների բաշխման հաշվառմանն ու վերահսկողությանը՝ այդ և միմիայն այդ է սոցիալիզմի հաղթանակի ուղին, նրա հաղթանակի գրավականը, ամեն տեսակ շահագործման, ամեն տեսակ կարիքի և աղքատության դեմ հաղթանակ տանելու գրավականը»[14]։

Այսպես է բնութագրել Լենինը համաժողովրդական հաշվառման և վերահսկողության էությունն ու նշանակությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու շրջանում։

---

12 Լենին, Երկեր, հատ. 27, էջ 326։

13 Նույն տեղում, էջ 365։

14 Լենին, Երկեր, հատ. 26, էջ 499։

Սակայն հաշվառման վերահսկողության անհրաժեշտությունն ու նշանակությունը սրանով չի սահմանափակվում։ Խստագույն վերահսկողությունն ու հաշվառումը աշխատանքի չափի և սպառման չափի վրա, գործերի պրակտիկ կատարման ստուգումը, ինչպես ցույց է տվել սոցիալիստական շինարարության փորձը, հանդիսանում է կենսական անհրաժեշտություն սոցիալիստական ու կոմունիստական շինարարության ամբողջ ընթացքում։ Եթե սոցիալիստական շինարարության պայմաններում համաժողովրդական հաշվառումն ու վերահսկողությունը դիտվում էր որպես սոցիալիզմի հաղթանակի կարևորագույն պայմաններ, ապա կոմունիզմի կառուցման պայմաններում դրանց անհրաժեշտությունն է՛լ ավելի է մեծանում։ Վերահսկողության դերի ու նշանակության աճը բխում է գլխավոր խնդրից՝ կոմունիստական շինարարությունից, սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացման, աշխատանքային ու պետական կարգապահության ամրապնդման փաստից։ Այլ կերպ ասած, հաշվառումն ու վերահսկողությունը կպահպանվեն նաև կոմունիզմի ժամանակ։

Կոմունիզմի ժամանակ աննախընթաց կերպով կզարգանա արտադրությունը, կդառնա ավելի բազմաճյուղ և բարդ։ Խոշոր, ավտոմատացման ենթարկված ինդուստրիան հասարակությունից, նրա ամեն մի անդամից կպահանջի կարգապահություն, հասարակության առաջ ունեցած պարտականության ու պարտքի խոր իմացություն։ Կոմունիստական հասարակարգը անտարբեր չի լինի, թե այս կամ այն բջիջը ինչքա՞ն արդյունավետ է օգտագործում իր ռեսուրսները, սպառո՞ւմ է նա հասարակական ունեցվածքը թե բազմապատկում այն։ Ըստ այնմ էլ կոմունիզմի կառուցման հետ միասին աշխատանքի ու սպառման չափի նկատմամբ սահմանված վերահսկողությունը կփոխարինվի իդեալական հասարակական հաշվառմամբ և վերահսկողությամբ՝ արտադրության և սպառման բոլոր պրոցեսներում։ Կառավարումը ենթադրում է վերահսկողության գոյությունը, քանի որ չի կարելի ղեկավարել, չուսումնասիրելով, թե ինչ է կատարվում իրականության մեջ։ Հնարավոր չէ պատկերացնել ինքնավարության օրգանների նորմալ գործունեություն, եթե նրանք զրկված լինեն իրենց հանձնարարությունների ու խորհուրդների կատարման արդյունքները ստուգելուց, եթե նրանք չկարողանան ստուգման նյութերի հիման վրա հարթել առաջացած հակասությունները՝ արտադրողական ուժերի զարգացման մակարդակի և արտադրական հարաբերությունների առանձին կողմերի միջև, հատկապես աշխատանքի բաժանման և նրա կազմակերպման բնագավառում։

Նշանակում է, վերահսկողության ֆունկցիան, հաշվառումը կպահպանվեն նաև կոմունիզմի ժամանակ։ Հաշվառումն ու վերահսկողությունը ոչ միայն սոցիալիզմի պահանջն են, այլ նաև կոմունիզմի, առանց դրանց չի կարող գոյություն ունենալ և զարգանալ կազմակերպված հասարակարգը, առանձնապես կոմունիստական հասարակարգը։

Այսպիսին են հաշվառման ու վերահսկողության անհրաժեշտությունն ու նշանակությունը սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման համար։

* * *

Վերահսկողությունը մեր երկրում դարձել է իսկական, համաժողովրդական։ Բավական է նշել, որ 1967 թ. կեսերին երկրում գործում էին ժողովրդական վերահսկողության 899.906 խմբեր ու պոստեր, որոնցում զբաղված էին

6.144.120 մարդ[15], այդ թվում Հայկական հանրապետությունում մոտ 60 հազար մարդ[16]։ Եթե հաշվի առնենք նաև այն, որ վերահսկողությանը ակտիվորեն մասնակցում են նաև սովետների դեպուտատներն ու նրանց մշտական հանձնաժողովները, կոմերիտական «լուսարձակները», կոոպերատիվների վերստուգիչ հանձնաժողովների անդամները, ինչպես նաև հասարակական տարբեր տեսչություններում աշխատող մարդիկ, ապա պարզ կդառնա, թե ինչքան մեծ է կուսակցության օգնականների բանակը, ինչպիսի մեծ ուժ է ներկայացնում իրենից համաժողովրդական վերահսկողությունը սոցիալիստական պետության մեջ։

Ժողովրդական վերահսկողության օրգանները դարձել են աշխատավորներին պետական կառավարմանը մասնակից դարձնելու իսկական մասսայական, համապարփակ ձևը, կոմունիստական շինարարության բոլոր տեղամասերում գործերի բարելավման ուժեղագույն միջոցը։ Նրանք հանդես են գալիս որպես պետական կարգապահության, սոցիալիստական օրինականության արթուն պահապաններ, ձգտում են մարդկանց դաստիարակել սովետական օրենքները հարգելու ոգով։

Եվ իրոք, չկա գործունեության մի ոլորտ, որտեղ սովետական մարդիկ չզգան ժողովրդական վերահսկողների ազդեցությունը։ Բայց վերահսկողության օրգանները գլխավոր ուշադրությունը դարձնում են արտադրության հարցերին, կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործմանը, նոր տեխնիկայի ներդրմանը, արտադրանքի որակի բարելավմանն ու ինքնարժեքի իջեցմանը, կառավարման ապարատի կատարելագործմանը, աշխատանքային կարգապահության ամրապնդմանը և այլն։

Բավական է բերել մեկ օրինակ, որպեսզի ավելի ռեալ պատկերացում կազմենք ժողովրդական վերահսկողության օրգանների աշխատանքի մասին կոմունիզմի կառուցման արդի էտապում։ Այսպես, վերջին երկու տարում մեր երկրում տնտեսման ու խնայողության արշավին մասնակցել են ավելի քան մեկուկես միլիոն ժողովրդական վերահսկողներ[17]։

Տնտեսման ու խնայողության մասսայական շարժման մեջ մեծ աշխատանք են կատարում նաև մեր հանրապետության ժողովրդական վերահսկողության օրգանները։

1966 թ. չորրորդ եռամսյակում Երևանում, Լենինականում, Կիրովականում և Րջևանի շրջանում կազմակերպվել էին 1147 ստուգատեսային հանձնաժողովներ, որոնցում ընդգրկվել էին կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունների ու ժողովրդական վերահսկողության օրգանների մոտ 9 հազար ներկայացուցիչներ։ 1967 թ. սկզբին այդ նախաձեռնությանն արձագանքեցին նաև հանրապետության մյուս ժողովրդական վերահսկողության կոմիտեներն ու խմբերը։ Ստեղծվեցին 2600 ստուգատեսային հանձնաժողովներ՝ 18 հազար մարդու մասնակցությամբ։ Ընդհանուր առմամբ ստուգատեսում ընդգրկվեց մոտ 80 հազար մարդ։ Ստուգատեսի ընթացքում ստացվեց 9257 առաջարկություն, այդ թվում՝ Երևանի ձեռնարկություններում՝ 5482 առաջարկություն։ Դրանք ուղղված էին նյութական ռեսուրսների ու դրամական միջոցների էլ ավելի արդյունավետ օգտագործմանը։ Առաջարկությունները

15 Տե՛ս «Политическое самообразование», № 9, 1967, стр. 54.
16 Տե՛ս «Коммунист», 17 мая, 1967 г.
17 Տե՛ս «Политическое самообразование», № 9, 1967, стр. 54.

ների ընդհանուր թվից 5856-ը ներդրվել է արտադրության մեջ՝ տարեկան 7 միլիոն տնտեսական արդյունավետությամբ։ Միայն Երևանում 1966 թ. տընտեսվել է 792 տոննա սև և գունավոր մետաղ, մոտ 10 միլիոն կիլովատժամ էլեկտրաէներգիա, 1638 տոննա պայմանական վառելիք, 167 հազար լիտր բենզին, 1035 հազար ռուբլու տարբեր տեսակի հումք և նյութեր։ 1967 թ. առաջին կիսամյակում տնտեսվել են 2.033 տոննա մետաղ, այդ թվում՝ գունավոր՝ 134 տոննա, էլեկտրաէներգիա՝ 42 միլիոն կիլովատժամ, 3899 տոննա նավթամթերք, 6917 տոննա վառելիք, 2036 խորանարդ մետր անտառանյութ։

Բոլոր տեսակի նյութական արժեքների տնտեսման ընդհանուր գումարը կազմել է 4.696 հազար ռուբլի։ Տնտեսված նյութերի հաշվին թողարկվել է 6584 հազար ռուբլու արտադրանք[18]։

Այդպիսի ստուգատեսներ հաջողությամբ կազմակերպվում են նաև երկրի մյուս քաղաքներում ու տնտեսական շրջաններում։

Ժողովրդական վերահսկողության օրգանները մեծ ուշադրություն են դարձնում նաև կենցաղի հարցերին, հասարակական սննդի հետագա զարգացմանն ու բարելավմանը, ճաշերի և, առհասարակ, ժողովրդական սպառման առարկաների որակի բարձրացմանը։

Երկրի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ժողովրդական վերահսկողությունը օգնել է նոր ռեզերվներ գտնելու և դրանք կոմունիզմի կառուցմանը ծառայեցնելու գործում, դրանով իսկ լուրջ ավանդ ներդնելով երկրի արտադրողական ուժերի հետագա զարգացման, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման բնագավառում։

Ժողովրդական վերահսկողության սիստեմում միլիոնավոր սովետական քաղաքացիներ անցնում են տնտեսավարման դպրոց, սովորում պետության ու արտադրության կառավարման արվեստը։ Դրանով իսկ ժողովրդական վերահսկողությունը նպաստում է կոմունիստական հասարակական հարաբերությունների ձևավորմանը։

Ժողովրդական վերահսկողությունը բարձրացնում է ղեկավարների պատասխանատվությունը հանձնարարված գործի նկատմամբ, նպաստում քննադատության և ինքնաքննադատության ծավալմանը, մարդկանց դաստիարակում կոլեկտիվիզմի ու մեր շարժմանը խանգարող երևույթների նկատմամբ անհաշտության ոգով։ Դրանով իսկ ժողովրդական վերահսկողությունը դառնում է մասսաների կոմունիստական դաստիարակության դպրոց։

---

18 Հայկական ՍՍՀ ժողովրդական վերահսկողության կոմիտեի ընթացիկ արխիվ։